ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության Ժողովրդական Խորհրդի միջեւ համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության Ժողովրդական խորհուրդը՝

նշելով Հայաստանի Հանրապետությանը եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետությանը մերձեցնող դարերի խորքից եկող ավանդական բարեկամական կապերը եւ փոխըմբռնումը,

հաստատելով երկու երկրների միջեւ քաղաքականության, տնտեսության, գիտության, տեխնիկայի, մշակույթի տարբեր բնագավառներում համագործակցությունը խրախուսելու եւ զարգացնելու կարեւորությունը,

ձգտելով հատկապես ամրապնդել միջխորհրդարանական կապերը Հայաստանի Հարապետության Ազգային ժողովի եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության Ժողովրդական խորհրդի միջեւ,

համաձայնեցին հետեւյալին՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության Ժողովրդական խորհրդում ստեղծել հայ-եգիպտական բարեկամության խորհրդարանական խումբ երկու խորհրդարանների միջեւ կապերի աջակցության եւ ամրապնդման նպատակով:

Խորհրդարանների միջեւ պարբերաբար կարծիքներ փոխանակել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տարբեր թեմաների եւ խնդիրների շուրջ:

Խորհրդարանական աշխատանքի տարբեր կողմերի շուրջ խորհրդակցություններ եւ փորձի փոխանակում իրականացնել երկու խորհրդարանների մշտական հանձնաժողովների, ինչպես նաեւ գլխավոր քարտուղարությունների միջեւ:

Տարբեր միջազգային եւ տարածաշրջանային խորհրդարանական հանդիպումներում եւ համաժողովներում փոխհամաձայնեցնել երկու խորհրդարանների գործունեությունը:

Սույն Համաձայնագիրը կատարված է Կահիրեում, 1997թ. մայիսի 4-ին, երկու բնօրինակից՝ հայերեն եւ արաբերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստն էլ հավասարազոր են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ՝	ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ՝
ԲԱԲԿԵՆ ԱՐԱՐՔՑՅԱՆ	ԱՀՄԵԴ ՖԱԹՀԻ ՍՈՒՐՈՒՐ Ժողովրդական խորհրդի նախագահ